ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«28» Դեկտեմբեր 2016թ. № 97-Ա

«ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1403-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 31-ի N 350-Ն որոշման 5-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1294-Ն որոշման N 1 հավելվածի 14-րդ կետի 4-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

2. Հաստատել «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության նոր խմբագրված կանոնադրությունը:

3. «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության նոր խմբագրված կանոնադրության պետական գրանցումը, ինչպես նաև նոր խմբագրված կանոնադրության վերաբերյալ պատշաճ իրազեկումը:

4. Սահմանել, որ սույն հրամանից բխող իրավաբանական անձի կանոնադրության պետական գրանցման հետ կապված ծախսերը իրականացվելու են «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

«28» Դեկտեմբեր 2016 թ

ք. Երևան

Կազմված է «18» Դեկտեմբեր 2016թ. և բաղկացած է 10 թերթից
Տպագրված է ընդամենը 3 օրինակ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
քաղաքաշինության նախարարի
«18» Դեկտեմբեր 2016 թ.
N 97-Ա հրամանի
Կազմակերպության տնօրեն՝
_____ Ա. Տեր-Մինասյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՍՊԱՆԴԱՉՅԱՆԻ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ
ԿՈՂՄԻՑ 10.12.2002 թ.
Գրանցման N 286.210.04756
Վկայական N 03 Ա 056557
10.12.02 թ. գրանցված կանոնադրության
թիվ 001.2 փոփոխությունը գրանցված է
ՀՀ արդարադատության նախարարության
աշխատակազմի իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի գործակալության կողմից
«_____» _____ 2016 թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

ք. Երևան 2016 թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ քաղաքաշինության նախարարության Հայ ճարտարապետության ազգային թանգարանը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 1988 թ. հունվարի 25-ի N 89 որոշման համաձայն՝ 1990 թ.հունվարին: ՀՀ կառավարության 1997 թ. հուլիսի 3-ի N 236 որոշմամբ վերակազմավորվել է ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի՝ գիտահետազոտական հիմնարկի կարգավիճակով (այսուհետ՝ հիմնարկ): 2002 թ. օգոստոսի 15-ի Հայաստանի Հանրապետության կառավարության N 1403-Ն որոշմամբ վերակազմավորվել է «Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության, որը հիմնարկի իրավահաջորդն էր: 2016 թվականի մարտի 31-ի N 350-Ն որոշման համաձայն «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 286.210.04732) միացվել է «Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (պետական գրանցման համարը՝ 286.210.04756): Նույն որոշմամբ «Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանվել է «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության: «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ պետական կազմակերպություն) «Ալեքսանդր Թամանյանի թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավահաջորդն է:

2. Պետական կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որն ստեղծվում է միայն մշակույթի, կրթության, գիտության և ոչ առևտրային այլ բնագավառներում գործունեություն իրականացնելու նպատակով:

3. Պետական կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային կամ անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանատող:

4. Պետական կազմակերպության լրիվ անվանումն է՝ հայերեն- **Ալեքսանդր Թամանյանի անվան Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպություն,** ռուսերեն – **Государственная не торговая организация – Национальный музей-институт архитектуры имени Александра Таманяна,** անգլերեն – **State non-commercial organization National museum-institute of architecture after Alexander Tamanyan:**

5. Պետական կազմակերպության գտնվելու վայրն է ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարության N 3 շենք, 1-ին հարկ:

6. Պետական կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի համաձայնության դեպքում:

7. Պետական կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով, իր անվամբ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով կլոր կնիք, դրոշմակնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

8. Պետական կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

9. Պետական կազմակերպությունն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության տարածքում սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ՝ ՀՀ արժույթով և տարադրամով:

10. Պետական կազմակերպությունը հիմնականում զբաղվում է ճարտարապետությանը, քաղաքաշինությանը և շինարարական արվեստին վերաբերվող պատմական, տեսական, արխիվային, թանգարանային ու գեղարվեստական արժեքների հավաքման, պահմանման, մշակման, գիտական նկարագրման, ուսումնասիրության և ցուցադրման հարցերով:

11. Պետական կամակերպությունը գիտալուսավորչական կենտրոն է, որի գործունեությունն ուղղված է ազգաբնակչությանը հայ ժողովրդի մշակութային պատմությունը ներկայացնելու և դրանով դաստիարակելու խնդրին, միաժամանակ հանդիսանալով հայկական ճարտարապետության հանրահռչակման կարևոր օջախ:

12. Պետական կազմակերպությունն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ՀՀ քաղաքաշինության նախարարության կանոնադրությամբ, «Թանգարանագիտության մասնագիտական էթիկայի միջազգային կանոնագրքով», այլ իրավական ակտերով Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և սույն կանոնադրությամբ:

13. Պետական կազմակերպությունն ինքնուրույն լուծում է իր գործունեության հետ կապված գիտական, տնտեսական, սոցիալական և կազմակերպական հարցերը:

2. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾԸ

14. Պետական կառուցվածքը ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը հաստատում է լիազորված պետական մարմինը: Թանգարանի կառուցվածքի հիմքը կարող են կազմել ֆոնդարանները, արխիվները, գիտահետազոտական բաժինները, լաբորատորիաները, ցուցասրահները, ֆինանսական, գիտատեխնիկական, վարչատնտեսական և այլ ծառայությունների հետ կապված ենթակա կառուցվածքները:

15. Պետական կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և իր կանոնադրության համապատասխան կարող են ստեղծվել հիմնարկներ, մասնաճյուղեր, կամ ներկայացուցչություններ:

16. Պետական կազմակերպության կողմից օտարերկրյա պետություններում մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը իրականացվում է տվյալ երկրի օրենսդրությանը

համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

17. Պետական կազմակերպության հիմնարկները, մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից:

3. «ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԱՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

18. Ալեքսանդր Թամանյանի, ինչպես նաև Հայաստանի խորհրդային և անկախության շրջանների և արտերկրի հայ ճարտարապետների կյանքին ու գործունեությանը վերաբերող արխիվային, լուսանկարչական, գծագրական, պատմական, անձնական և ցուցադրական այլ նյութերի հավաքումը, պահպանումը, հաշվառումը, վերականգնումը, համակարգումը և դրանց հիման վրա գիտահետազոտական աշխատանքների իրականացումը:

19. Արվեստի, տնտեսության, Հայաստանի միջազգային ճանաչման, հնագիտության և այլ ասպարեզներում Ալեքսանդր Թամանյանի գործունեության ազդեցության, ինչպես նաև Ալեքսանդր Թամանյանի ճարտարապետական ոճը շարունակող ճարտարապետների գործունեության ուսումնասիրումը:

20. Հայկական ճարտարապետությանը, քաղաքաշինությանը, շինարարական արվեստին վերաբերող պատմական և կրոնական նշանակության նյութերի հավաքումը, ուսումնասիրումը, պահպանումը և մասսայականացումը:

21. Ճարտարապետության, քաղաքաշինության, շինարարական արվեստին և անհատ ճարտարապետների ստեղծագործություններին վերաբերող տվյալների բանկի ստեղծումը:

22. Իր ֆոնդերի համակարգչային մշակման և պահպանման ապահովումը, ցուցանմուշների հավաքումը կամ գնումը, թանգարանի ֆոնդարանի, ինչպես նաև հայկական ճարտարապետությանը վերաբերող գիտամասսայական և գովազդային գրականության հրատարակության պատրաստումն ու սահմանված կարգով հրապարակումը:

23. Մշտական, ժամանակավոր և շրջիկ ցուցահանդեսների կազմակերպումը (նաև օտարերկրյա պետություններում):

24. Խմբագրահրատարակչական գործունեության իրականացումը:

25. «Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) վճարովի գիտամասսայական միջոցառումների (ցուցահանդեսներ, նշանավոր անձանց կամ իրադարձություններին նվիրված միջոցառումներ, երեկոներ, դասախոսություններ և այլ) կազմակերպում.

2) սահմանված կարգով ճարտարապետության վերաբերյալ գիտահրատարակչական աշխատանքների կատարում.

3) ցուցահանդեսների, գրադարանի և ֆոնդի արխիվային նյութերի հիման վրա վճարովի ծառայությունների մատուցում.

4) ցուցահանդեսների ձևավորում.

5) իրավաբանական և ֆիզիկական անձանց ճարտարապետությանը, քաղաքաշինությանը և շինարարական արվեստին վերաբերող փաստավավերագրական նյութերի կրկնօրինակների տրամադրում՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

4. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

26. Պետական կազմակերպությունը կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեության միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված գործունեության տեսակներով: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով պետական կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

27. Պետական կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է նրա կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար: Պետական կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:

28. Ենթաօրենսդրական ակտերով պետական կազմակերպությանը չեն կարող տրվել այնպիսի իրավունքներ կամ արտոնություններ, որոնց հետևանքով պետական կազմակերպությունը կարող է ապրանքային շուկայում գերիշխող դիրք գրավել կամ խախտել տնտեսական մրցակցության մասին օրենսդրության այլ պահանջները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

29. Պետական կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները կատարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող պետական կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

30. Պետական կազմակերպության հիմնական խնդիրն է այցելուներին ծանոթացնել հայ և այլ ժողովուրդների ու երկրների ճարտարապետության, քաղաքաշինության և շինարարական արվեստի պատմությանը և ժամանակակից ձեռքբերումներին:

31. Պետական կազմակերպության գործունեության նպատակն է հավաքել, պահպանել, ուսումնասիրել, համալրել, գիտական մշակման ենթարկել հայ և օտարազգի ճարտարապետության, քաղաքաշինության և շինարարական արվեստի պատմությանը, տեսությանը և գործնականին վերաբերող արխիվային և թանգարանային արժեքները:

Այդ նպատակով պետական կազմակերպության գիտական անձնակազմը ստեղծում է և համալրում գիտական ֆոնդեր, արխիվներ, ուսումնասիրում, գիտական մշակման է ենթարկում հավաքված նյութերը և կազմակերպում է մշտական ու ժամանակավոր ցուցադրություններ:

Պետական կազմակերպությունը ստեղծում է յուրաքանչյուր հայ ճարտարապետի (անկախ բնակության վայրից) անձնական արխիվ-ֆոնդարան:

32. Պետական կազմակերպությունը ծավալում է մասսայական գիտալուսավորչական աշխատանքներ: Ստեղծում է գիտամեթոդական գրադարան: Կազմակերպում է համագործակցություն ուսումնական հաստատությունների հետ: Ծավալում է գիտական կադրերի պատրաստմանը նպաստող գործունեություն:

33. Իր վրա դրված խնդիրների կատարման համար պետական կազմակերպությունը մշակում է գիտահետազոտական և գիտացուցադրական գործունեության հիմնական ուղղությունները: Իրականացնում է պետական կազմակերպությունում կատարվող աշխատանքների գիտական, պետական և հեղինակային առաջնության պաշտպանությունը:

34. Պետական կազմակերպությունը կազմում է խմբագրական-հրատարակչական գործունեության ծրագրեր, ապահովում է տպագրության համար նախատեսված աշխատանքների հրատարակումը:

35. Պետական կազմակերպությունը սահմանված կարգով իրականացնում է միջազգային ցուցահանդեսներ, գիտական համագործակցություն, կազմակերպում է գիտաժողովներ, խորհրդակցություններ, արտասահմանյան թանգարանների հետ կնքում է համաձայնագրեր:

36. Պետական կազմակերպության կողմից իրականացվող գիտահետազոտական աշխատանքներն իրենց մեջ ներառում են՝ թեմատիկ ցուցադրության պլանների, արշավախմբերի, գիտական հաշվետվությունների, գիտական քարտարանների, կատալոգների, ֆոնդերի, անձնական իրերի և հավաքածուների նկարագրություն, մատենագիտական աշխատանքների, մենագրությունների և հոդվածների, թանգարանագիտության վերաբերյալ գիտամեթոդական աշխատանքների, գիտաժանդակ նյութերի մշակումներ, գիտատեսական հետազոտություններ:

37. Գիտահավաքչական աշխատանքները իրականացնելիս թանգարան-ինստիտուտը կազմակերպում է գիտական արշավախմբեր, հետազոտություններ, գիտական գործուղումներ, հայտնաբերում և ուսումնասիրում է իր պրոֆիլին համապատասխան նյութեր, որոնք պահվում են պետական արխիվներում, գրադարաններում և այլ թանգարաններում: Մշտապես կազմակերպում է նյութերի հավաքում բնակչությունից և տարբեր կազմակերպություններից (այդ թվում գնումների միջոցով):

38. Պետական կազմակերպության գիտական անձնակազմը մշտապես իրականացվում է թանգարանային արժեքների հաշվառման և պահպանման աշխատանքները, գործող կանոնների և հրահանգների համապատասխան ապահովում է թանգարանային ֆոնդերի պահպանումը, դրանց անվտանգությունը:

5. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

39. Պետական կազմակերպության գործունեությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ֆինանսավորվում է ՀՀ պետական բյուջեի միջոցների, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից: Պետական կազմակերպությունը հաստատում է իր ծախսերի նախահաշիվը, ստանում և ծախսում է միջոցներ, այդ թվում՝ պայմանագրերով և արտասահմանյան տարադրամով:

Պետական կազմակերպությունն օգտվում է բանկային վարկից և պատասխանատվություն է կրում դրա նպատակային օգտագործման ու ժամանակին մարելու համար:

ՀՀ օրենսդրությանը համապատասխան և սույն կանոնադրության հիման վրա տնօրինում է իրեն պատկանող դրամական միջոցները և գույքը:

40. Պետական կազմակերպությունն օգտագործման և շահագործման համար իր տնօրինության տակ կարող է ունենալ շենքեր, շինություններ, կառույցներ, սարքավորումներ, տրանսպորտային և կապի միջոցներ, այլ գույք, ինչպես նաև աշխատակիցների սոցիալական պահանջների բավարարումն ապահովող հաստատություններ (բնակարանային ֆոնդ, հյուրանոց, հանգստյան տուն, մանկական ճամբար, ստեղծագործական տուն և այլն):

41. Սահմանված կարգով պետական կազմակերպությունը հաշվեկշռից դուրս է գրում հնացած, մաշված և հետագա օգտագործմանն ու իրացման համար ոչ պիտանի հիմնական միջոցները, որոնց արժեքը նման գործարքներ կատարելու մասին որոշում ընդունելու օրվանը նախորդող ամսվա դրությամբ պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի 50 %-ը չի գերազանցում: Գործարքները կատարվում են պետական կազմակերպության առօրյա գործունեության ընթացքում: Խոշոր գործարք կատարելու մասին որոշումն ընդունվում է ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից: Այս պահանջների խախտմամբ կատարված խոշոր գործարքը կարող է ճանաչվել անվավեր ՀՀ քաղաքաշինության նախարարի կողմից:

42. Պետական կազմակերպությունն իր աշխատանքների կազմակերպման համար ձեռք է բերում անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, սարքեր, հումք, նյութեր, վառելանյութ, նյութական այլ ռեսուրսներ:

6. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

43. Պետական կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորված մարմինը՝ ՀՀ քաղաքաշինության նախարարությունը, գործադիր տնօրենը:

44. Պետական կազմակերպության հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք, բացառությամբ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի:

45. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) Պետական կազմակերպության հիմնադրումը.

2) Պետական կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

3) Պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և/կամ ամրացվող պետությանը պատկանող գույքի կազմի հաստատումը.

4) Պետական կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխություններ կատարելը.

5) Պետական կազմակերպության կառավարումը.

6) Պետական կազմակերպության գործունեության վերահսկողությունը.

7) Պետական կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.

8) Պետական կազմակերպության կառուցվածքի սահմանումը.

9) Պետական կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը.

10) Պետական կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

11) Պետական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը.

46. Պետական կազմակերպության տնօրենը, նրա տեղակալները, պետական կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող պետական կազմակերպության:

47. Պետական կազմակերպության տնօրենն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) ղեկավարում է պետական կազմակերպությունը.

2) կենսագործում է վերադաս ատյանների և պետական կազմակերպության գիտական խորհրդի որոշումները.

3) հետևում է պետական կազմակերպության ֆինանսական և նյութատեխնիկական ապահովվածությանը, կազմակերպության գործունեության իրականացմանը.

4) հաշվետու է պետական կազմակերպության գործունեության համար հիմնադրին և լիազորված մարմնին.

5) ներկայացնում է պետական կազմակերպությունը պետական հաստատություններում և միջազգային կազմակերպություններում.

6) առանց լիազորագրի հանդես է գալիս պետական կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը, կնքում է գործարքներ.

7) ՀՀ օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը՝ այդ թվում ֆինանսական ռեսուրսները.

8) տալիս է պետական կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

9) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում պետական կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

10) բանկերում բացում է հաշվարկային այլ հաշիվներ.

11) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

12) սահմանում է պետական կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների իրավաությունները.

13) հաստատում է պետական կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները.

14) նշանակում է պետական կազմակերպության պետական հիմնարկների, ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարներին և նրանց տալիս է համապատասխան լիազորագրեր.

15) Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր իրավասությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

16) հաստատում է պետական կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

17) իրականացնում է օրենսդրությանը չհակասող և պետական կազմակերպության կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

48. Պետական կազմակերպության տնօրինությանը կից՝ խորհրդակցական ձայնի իրավունքով ստեղծում և իր նախագահությամբ ղեկավարում է գիտական խորհուրդը, որի կազմը հաստատվում է ՀՀ քաղաքաշինության նախարարի կողմից:

49. Գիտական խորհրդի նախագահը պետական կազմակերպության տնօրենն է, նրա բացակայության ժամանակ՝ գիտական աշխատանքների գծով տեղակալը:

Պետական կազմակերպության տնօրենի և գիտական խորհրդի միջև տարաձայնությունները լուծում է ՀՀ քաղաքաշինության նախարարությունը:

50. Պետական կազմակերպության գիտական խորհուրդը՝

1) քննարկում և հաստատում է պետական կազմակերպության գիտական հետազոտությունների, գիտահավաքչական, գիտացուցադրական և գիտամասսայական աշխատանքների հիմնական ուղղությունները, թեմատիկան և ծրագրերը.

2) քննարկում և հրատարակության է երաշխավորում պետական կազմակերպության կողմից տպագրության պատրաստված մենագրությունները, ուղեցույցերը, կատալոգները և ցուցակները.

3) սահմանված կարգով լսում և քննարկում է պետական կազմակերպության տնօրենի, առանձին ստորաբաժանումների ղեկավարների և գիտական աշխատողների առաջարկությունները, հաշվետվությունները և հաղորդումները կատարված գիտական, կազմակերպական և ֆինանսական գործունեության մասին, տալիս առաջարկություններ.

4) քննարկում է պետական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված հարցեր:

7. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

51. Պետական կազմակերպության սեփականությունը ձևավորվում է հիմնադրի կամ հիմնադրի կողմից լիազորված մարմնի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնված, ինչպես նաև պետական կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից: Պետական կազմակերպությանը հիմնադրի կողմից որպես սեփականություն հանձնված գույքի չափը սահմանվում է պետական կազմակերպության հիմնադրման մասին

որոշմամբ: Հիմնադրման ժամանակ պետական կազմակերպության հիմնադիրը կամ հիմնարկի լիազորված մարմինը չի կարող որպես սեփականություն հանձնել նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկից ավելի արժողությամբ գույք, եթե օրենքով կամ հիմնադրի որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

52. Պետական կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և իր կանոնադրությանը համապատասխան, իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

53. Պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ՝ բացառությամբ ընկերության լուծարման դեպքի: Պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի չի կարող անհատույց օտարվել:

54. Պետական կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

55. Պետական կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն օրենքով նախատեսված դեպքերում՝ դատական կարգով:

8. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ

56. Հիմնադիրը կարող է պետական կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով նրան ամրացնել ցանկացած գույք:

57. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից պետական կազմակերպությանն ամրացված գույքը, եթե այն անհրաժեշտ է պետական կամ հանրային ավելի կարևոր կարիքների համար:

58. Պետական կազմակերպությունն իրավունք ունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարել, գրավ դնել, հանձնել վարձակալության կամ օգտագործման:

Պետական կազմակերպությունը կարող է իրենց ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ և լիազորված պետական մարմնի համաձայնությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանել, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում պետական կազմակերպության ստացած արտադրանքը և եկամուտները նրա սեփականությունն են, եթե այլ բան նախատեսված չէ պետական կազմակերպության կանոնադրությամբ:

59. Հիմնադրի կողմից գույքը պետական կազմակերպությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ նրա կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

60. Հիմնադրի կողմից պետական կազմակերպությանը ամրացված անշարժ գույքի կամ պետական կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

9. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՄՆԱՐԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

61. Պետական կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով:

62. Պետական կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար:

10. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

63. Պետական կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, լիազորված պետական մարմինը և հիմնարկի կողմից լիազորված և օրենքով նախատեսված պետական կառավարման այլ մարմինները: Պետական կազմակերպությունը հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

11. ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

64. Պետական կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Պետական կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հարյուր տոկոսով պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնարկի: Պետական կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

65. Պետական կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու, բացառությամբ թանգարանում պահպանվող ֆոնդային և արխիվային նյութերի, որոնց ճակատագիրը՝ թանգարանի լուծարման դեպքում, տնօրինվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

66. Պետական կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

67. Պետական կազմակերպության լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ողողվում է պետական բյուջե: